

**Սմբատ Խ. Հովհաննիսյան**

*Պատմ. գիտ. թեկնածու*

**ԱՆՆԱԼՆԵՐԻ ԳՊՐՈՑԸ 21-ՐԴ ԳԱՐԻ ՇԵՄԻՆ**

«Քննադատական շրջադարձ», թե՞ ճակատային վերադասավորում\*

**Բանալի բառեր** – Աննալների դպրոց, աննալական Չորրորդ սերունդ, հետաքրքիական քննադատություն, անդրգիտակարգայնություն, գիտակարգային ապագատում, ինքնության վերաապահովագրություն, քննադատական շրջադարձ, համակցային վերլուծություն, անցումային իմացաբանություն:

**Մուտք**

Պատմագիտական փոխակերպումների ծիրում ուշագրավ է Աննալների դպրոցի **Չորրորդ սերնդի** խնդրականը: Աննալների համար այս շրջանը հաճախ պատմաբաններն անվանում են «բեկումային ժամանակաշրջան»<sup>1</sup>, «անորոշությունների ժամանակաշրջան», «պատմագետների հասկանալիության ձգնաժամ», «իմացաբանական անիշխանություն» և այլն<sup>2</sup>:

Ճգնաժամը, խորքային առումով, արդյունք էր կողմնորոշումների և հետազոտական հարացույցների հետաքրքիական (պոստմոդերնիստական) քննադատության<sup>3</sup>, միևնույն ժամանակ՝ նաև դպրոցի ներքին վերադասավորումների, որոնց հետևանքով խախտվել

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 29.05.2022:

1 **Бессмертный Ю.**, Школа «Анналов»: весна 1989 г., «Европейский альманах», М., 1991, с. 139.

2 **Sté u Delacroix Ch., Dosse F., Garcia P.**, Les courants historiques en France (19e-20e siècle), Paris, “Armand Colin”, 2005, էջ 166, **Noiriel G.**, Sur la “crise” de l’histoire, Paris, “Belin”, 1996, էջ 33, **Delacroix Ch.**, La falaise et le rivage. Histoire du tournant critique, “Espaces Temps”, 1995, N 59-61, էջ 88-89:

3 Ավելի մանրամասն տես **Lyotard J.-F.**, La Condition Postmoderne: Rapport sur le Savoir, “Les Editions de Minuit”, 2000:

էր նախկին հավասարակշռությունը: Ըստ ֆրանսիացի պատմագետ ժերար Նուարիեի՝ հավասարակշռության նման խախտման գլխավոր գործոնը դեռ 1960-ական թվականներին բարձրագույն կրթության ժողովրդավարացման հետևանքով համալսարանականների զանգվածային հավաքագրումն էր: Որպես արդյունք՝ ֆրանսիացի պատմագետների մասնագիտական համայնքի անդամների թիվը, որը XIX դարի վերջից մինչև Երկրորդ աշխարհամարտ չէր գերազանցում 100-ը, հրնթացս մի քանի տարվա տասնապատկվեց. նախորդ տասնամյակներում ձեռք բերված փխրուն հավասարակշռությունը ուղղակի փլուզվեց<sup>4</sup>: Գիտակարգի փլուզման մեջ մեծ էին նաև միջգիտակարգայնության առաջընթացը, գիտական հետազոտությունների միջազգայնացումն ու ԶԼՄ-ների հետ կապի ամրագրումը: Պակաս չէր նաև 1984 թվականին պետական ատենախոսության (thèse d'Etat) վերացումը, որից հետո մնաց միայն մեկ՝ դոկտորական (doctorat) աստիճան (ֆրանսիական կառավարությունն այս քայլին գնաց, որպեսզի իր գիտական համակարգը համապատասխանեցնի դոկտորական աստիճանի միջազգային չափանիշներին). պատմության (և ոչ միայն) գիտակարգի «ատոմականացումը» պատրաստ էր:

Աննալականների դեպքում այս ամենին գումարվեց նաև, այսպես կոչված, «սերունդների բեկվածքը», որն ի հայտ եկավ մանավանդ 1980-ական թվականներին. նախկին սերնդին փոխարինելու էր եկել նորը, որը, ի տարբերություն նախորդների, ավելի տարասեռ էր: Իսկ քանի որ սովորաբար նոր տեսությունների առաջացմանը, ինչպես նկատել է Թոմաս Թուհնը, «նախորդում է մասնագիտական ընդգծված անհուսալիության շրջանը»<sup>5</sup>, պատահական չէր և այս իրավահաջորդության հետևանքով դրսևորված դպրոցի «ինքնության ճգնաժամը (crise d'identité)»: Այսպես՝ դեռ 1980 թվականին Պիեռ Նորան հեռացավ և Մարսել Գոշի հետ հիմնեց «Բանավեճ» («Le Débat») երկամսյա պարբերականը, որով կրկին պատմական տրամասություն էր ներմուծում քաղաքական հեռանկարը: Իր հերթին Պիեռ Շոնյուն վկայակոչում էր «եկամտաբերության անկումը», իսկ Ֆրանսուա Ֆյուրեն դեռ 1982 թվականին (Թուրինի միջազգային գիտաժողովի ժամանակ) ուղղակի նշում էր, որ Աննալների

4 **Stu Noiriel G.**, A propos de la “crise” de l’histoire en France, “French Politics and Society”, 1997, N 1, էջ 47:

5 **Kuhn Th. S.**, The structure of scientific revolutions, Chicago and London: The University of Chicago Press, 1996, p. 67-68.

դպրոցը զրկվել է «ոգու և մոտեցումների միասնականությունից»<sup>6</sup>, և արդեն 1985 թվականին (իր իսկ ցանկությամբ) թողեց Բարձրագույն դպրոցի սոցիալական գիտությունների (EHESS) նախագահի պաշտոնը, որպեսզի գլխավորի պատմագետների ու փիլիսոփաների բուլորովին այլ մի ցանց՝ Ռայմոն Առոնի ինստիտուտի շրջանակներում: Ինչ վերաբերում է Ժորժ Դյուբիին, ապա նա արդեն 1987 թվականին նշում էր «շնչահեղձության զգացողության» մասին և հավելում, որ «Հարցին, թե գոյություն ունի՞ այսօր Աննալների միասնական դպրոց, հարկ է վճռականորեն պատասխանել՝ ո՛չ»<sup>7</sup>:

## 1. Աննալների դպրոցի Չորրորդ սերնդի սաղմնավորման շեմին

1980-ական թվականների վերջին ձգնաժամի կամ Աննալների դպրոցի չգոյության մասին դատողությունները ձեռք են բերում բուլորովին այլ բովանդակություն և իմաստ: Սակայն ոչ բոլոր աննալականներն էին, որ հրաժարվեցին պատմագիտության դաշտի այս քայքայման պատասխանատվությունից, քանի որ հանդեսի շրջանակներում տարվող աշխատանքները ցույց էին տալիս, որ պատմագիտությունը, այդուամենայնիվ, դեռ կարող է հարստանալ հասարակական գիտությունների մեթոդներով՝ առանց ընթացակարգերի մեխանիկական փոխանցման: Մի բան, որով հնարավոր կլիներ նաև պահպանել «պատմագիտության հավակնությունները համադրության, իրականության տարբեր մակարդակների հողավորման, ժամանակի կարճ և երկար տևողությունների տրամախոսության (dialectique) նկատմամբ»<sup>8</sup>: Բանն այն է, որ «ձգնաժամը», որքանով վերաբերում է հին հարացույցների բեկանմանը, վերարժևորմանը, նույնքան էլ վերաբերում է նոր հարացույցների առաջացմանը: Այս ենթատեքստում էլ թերևս հարկ է խոսել աննալականների **նոր փուլի սաղմնավորման** մասին, քանի որ հանդեսի էջերում շարունակում են արտահայտվել անցյալի վերարժևորման մեթոդների, հին ու նոր հարացույցների համադրման հետազոտական մոտե-

6 Ավելի մանրամասն տես Furet Fr., Les Methodes des Sciences sociales dans les recherches historiques et l' "Histoire totale", in Furet Fr., L'Atelier de l'Histoire, Paris, "Flammarion", 1982, էջ 2-17:

7 Duby G., Le plaisir de l'historien, in Pierre N. (dir.), Essais d'ego-histoire, Paris, "Gallimard", 1987, p. 132.

8 Dosse F., L'Histoire en miettes: des Annales à la "Nouvelle Histoire", Paris, "La Découverte", 1987, p. 251.

ցումների անհրաժեշտության մասին: Խոսքը, հարկավ, առավելաբար պատմագիտության նոր հնարավորությունների դաշտի ձևավորման մասին է. անհրաժեշտ էր վերակազմակերպել սոցիալականի և սոցիալական մտքի բնագավառում եղած քննադատական հարացույցները<sup>9</sup>: Ուստի աննալականների նոր սերունդը, տոգորված պատմագիտության նոր հիմնախնդիրների և հետազոտական մեթոդների մշակման ճիգով, փորձեց առաջացած տարբեր ուղղությունները նորովի միավորել և լիովին գիտակցաբար նոր նախագիծը կառուցեց մասամբ իբրև ծավալուն և ուժգին քննադատության պատասխան: Բայց և հարկ է նշել, որ ուրվագծվող աննալական Չորրորդ սերունդը «սկզբունքային մտավոր խզման» մեջ էր անմիջապես իր նախորդ՝ երրորդ սերնդի նկատմամբ՝ ընդհուպ հանդեսի 1968-1989 թվականներին որոշարկված զարգացման գծերից հրաժարումը<sup>10</sup>:

Այսու՝ 1988-1989 թվականներին հանդեսը որդեգրեց միջգիտակարգայնության կառավարման մեկ այլ եղանակ, որը թերևս կարելի է անվանել **անդրգիտակարգայնություն (transdisciplinarité)**, որն արդեն ենթադրում էր ոչ թե հարակից գիտությունների կողմից կիրառվող հղացքների բռնի յուրացում, այլ դրանց փոխառում իրենց գործառությունների (opérationnalité) սահմաններում՝ այն գիտակարգի ներսում, որն ինտեգրում է դրանք: Փնտրտուքների մի շարան, որն արտահայտվեց նախ հանդեսի 1988 թվականի «Պատմությունը և հասարակական գիտությունները: Քննադատական շրջադա՞րձ»<sup>11</sup>, իսկ հետո՝ նաև 1989 թվականի «Փորձառել փորձառությունը»<sup>12</sup> խմբագրականում, որոնք, ըստ էության, հետազոտական նոր նախագիծ էին: Այսու՝ աննալականների նոր սերունդն ընդունում էր առաջադրված մարտահրավերները և փորձում լուծում տալ դրանց, թեև նրանք վաղուց հրաժարվել էին առաջնորդական հավակնություններից, անգամ պնդում էին, որ Աննալների դպրոց, որպես այդ-

9 Տե՛ս **Агирре Рохас К. А.**, Критический подход к истории французских «Анналов», М., Издательство «Круг», 2006, էջ 171:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 174:

11 Տե՛ս **Histoire et sciences sociales**. Un tournant critique? “Annales: ESC”, 1988, N 2, էջ 291-293:

12 Տե՛ս **Tentons l'expérience**, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1317-1323: Ի դեպ, 1989 թվականի վերջին (6-րդ) համարի ընդհանուր թեմատիկ վերնագիրը 1988 թվականի խմբագրականի վերնագիրն է՝ առանց հարցականի՝ «Պատմությունը և հասարակական գիտությունները. քննադատական շրջադարձ»:

պիսին, գոյություն չունի, թերևս կային միայն բազմաթիվ «իրարա-  
հաջորդ հարացույցներ»<sup>13</sup>:

Աննալականների՝ պատմության խնդիրների նկատմամբ «նոր լե-  
զուն և նոր մոտեցումը» արդեն իսկ դրսևորվեցին հանդեսի 1988  
թվականի առաջին համարում, որը նվիրված էր ներկայացման պատ-  
մությանն ու մոդելավորմանը (*histoire et modélisation presentation*): Այստեղ  
խմբագրության քարտուղար Բեռնար Լըպտին ուշադրություն էր հրա-  
վիրում պատմագիտության մեջ քանակական մեթոդների կիրառման  
առնչությամբ աճող դժգոհության վրա, նշում դեպի պատումն ու հեր-  
մենևնտիկան վերադարձի մասին և հավանություն տալիս նկարագրա-  
կան վիճակագրության քննադատությանը՝ դրան հակադրելով ձևա-  
ցումը (*simulation*)՝ վարկածային մոդելների միջոցով<sup>14</sup>, ինչը «հնարա-  
վորություն տվեց կամուրջ ստեղծելու լեզվի տեսաբանների և էմպի-  
րիկ տվյալների միջև»<sup>15</sup>:

## 2. «Քննադատական շրջադարձ». նոր մեթոդների և նոր դաշինքների որոնումներում

Հաջորդ կարևոր քայլն այս ուղղությամբ եղավ արդեն հանդե-  
սի նույն՝ 1988 թվականի երկրորդ համարում հրատարակված  
խմբագրականը՝ «Պատմությունը և հասարակական գիտություննե-  
րը: Քննադատական շրջադարձ»: Նախագիծը կոչված էր շրջանցե-  
լու և մերժելու «պատմության ճգնաժամ» եզրույթը այն համա-  
տեքստում, որում Աննալների պատմագիտական հարացույցը (բացի  
իր հաջորդական կերպավորումներից) 1980-ական թվականների  
վերջերին լայն քննադատության ենթարկվեց և կասկածի տակ  
դրվեց սոցիալական պատմության «ճգնաժամի» ավելի լայն շրջա-  
նակներում<sup>16</sup>: Մյուս կողմից, սակայն, նրանք չէին ժխտում, որ մաս-  
նակցում են մի «նոր, դեռևս խճճված գործընթացի», որը «ապագա-  
յում պատմագետի մասնագիտության սահմանման խնդիրն է»<sup>17</sup>:  
Ինչպես Դելակրուան է նկատում, «ինքնութենական պաշտպանությ-

13 Wiślicz T., The “Annales” School and the Challenge of the Late 20th Century. Criticism and Tentative Reforms, “Acta Poloniae historica”, 2005, N XCII, p. 214.

14 Տե՛ս Lepetit B., Histoire et modélisation. Présentation, “Annales: ESC”, 1988, N 1, էջ 3:

15 Wiślicz T., op. cit., p. 214.

16 Մի բան, որի հետևանքով անգամ աննալականների ներսում էին կասկածները շատացել:

17 *Histoire et sciences sociales*. Un tournant critique? p. 293.

յունը» արմատավորվեց նախ իբրև «հրաժարում ճգնաժամից», իբրև ճգնաժամի ժխտում<sup>18</sup>: Ըստ խմբագրականի՝ «անվստահության ժամանակով» պայմանավորված վիճակը գերակայող մարքսականության և կառուցաբանության, ինչպես նաև քանակական պատմության նկատմամբ ի հայտ եկած անվստահության արդյունք էր, որքանով վերջիններս «կորցրել էին իրենց կառուցավորող ընդունակությունը»<sup>19</sup>: Ուստի պատմությունը, որն իր շարժունությունը (dynamisme) հաստատել էր մեծ մասամբ «միասնացնող հավակնության» վրա, իսկ Աննալների դպրոցի ծաղկումն ինքնին պատմագիտության և սոցիալական գիտությունների համադրման հնարավորությունն էր (որը թույլ էր տալիս բարեփոխել նրա հետազոտության առարկան, հիմնախնդիրն ու ընթացակարգը), բնականաբար չէր կարող անմասն մնալ սոցիալական գիտություններում տիրող համընդհանուր ճգնաժամից: Մյուս կողմից՝ ակնհայտ է նաև «ալարկոտ լուծումների (solutions paresseuses)» գերակայությունը, երբ գիտակարգի փոփոխվող մտավոր բնապատկերի անհստակության պատճառով անհնար է դառնում նաև նոր դաշինքների ու նոր հարացույցների ստեղծումը: Այս ամենից էլ ելնելով՝ աննալականները կարծում էին, որ ժամանակն է «քարտերը վերադասավորելու»՝ շեշտելով նաև, որ խոսքը «փոփոխվող իրավիճակի վերաբերյալ հաշվետվության» մասին չէ, այլ «ձեռք բերված և ընթացիկ փորձի հիման վրա որոշ կողմնորոշիչների բացահայտման, անորոշության ժամանակ խիստ և նորարարական պրակտիկաների որոշ ուղեցույցների սահմանման»<sup>20</sup>:

Այդուամենայնիվ, ուրվագծվող Չորրորդ սերնդի ներկայացուցիչները չէին գնում ինչ-որ ամփոփիչ ընդհանրացումների, այլ միայն առանձնացնում էին **երկու** հիմնարար հեռանկարային հարցադրումներ, որոնց շուրջ պետք է ծավալվեին հետագա քննարկումները: Դրանք էին **նոր մեթոդներն** ու **նոր դաշինքները**: Նոր մեթոդների դեպքում նրանք առանձնացնում էին **վերլուծության մասշտաբների** և **պատմության գրության խնդիրները**՝ հատուկ

18 Տե՛ս Delacroix Ch., նշվ. աշխ., էջ 89:

19 Histoire et sciences sociales. Un tournant critique? p. 291.

20 Սույն տեղում, էջ 292: Տե՛ս նաև **Лепти Б., Гренье Ж.-И.**, О некоторых изменениях в журнале «Анналы» в 1994 г. (Ответы на вопросы Ю. Л. Бессмертного), Одиссей: Человек в истории, РАН, Ин-т всеобщ. истории, М., 1994, էջ 316:

կարևորելով վարկածի բնույթի և դրան ստուգման տարրերի հարաբերությունները, իսկ նոր դաշինքների դեպքում՝ շեշտադրում «ուրիշ վկայություններ և ուրիշ հետազոտություններ ծայրամասերից», քանի որ պատմության ծայրամասերում դեռ մնում էին գիտակարգային այնպիսի ոլորտներ, որոնց ձգտում էր պատմությունը (ինչպես՝ արվեստի պատմությունը, գիտության պատմությունը և այլն)<sup>21</sup>:

### 3. «Փորձելով փորձառությունը» և գիտակարգային ապագատում

Այսպիսի նախապատրաստական հարցարկումներից հետո միայն 1989 թվականի վերջին համարում աննալական նոր ձևավորվող սերունդն արդեն հանդես եկավ «Փորձելով փորձառությունը» խորագրով տեսական նոր խմբագրականով, որն իր հարցարկումներով և ընդհանրացումներով ավելի վճռական էր ու ավելի կողմնորոշված: Ինչպես հետագայում խոստովանում է Բեռնար Լըպտին, «1989 թվականի վերջին համարը կարելի է կարդալ որպես ամսագրի աշխատանքի փոփոխության նշան»<sup>22</sup>: Այս համարում խմբագրականի հեղինակներն առաջադրում էին նոր բաժանումների, մասնատումների խնդիրը, որոնք աստիճանաբար առաջ էին եկել գիտակարգային ապագատման (décloisonnement) հետևանքով: Այսպես՝ հանդեսի 60-ամյակին նվիրված համարի խմբագրական մուտքային խոսքը, հարկավ, վճռականորեն ինքնաքննադատական էր: Ավելին՝ այն նվիրված էր այն չափանիշների վերականգնմանը, որոնց վրա դպրոցը կառուցել էր իր հաջողությունը ավելի քան կես դար, որպիսին է միջգիտակարգայնությունը (interdisciplinarité), միաժամանակ լինելով ինքնօրինակ «մեթոդաբանական մանիֆեստ», ինչպես բնորոշում է ռուս պատմագետ Յու. Բեսսմերտնին<sup>23</sup>: Թերևս ավելի դիպուկ է աննալականներից Դելակրուայի դիտարկումը, համաձայն որի՝ այս նախաձեռնությունը «ինքնության վերաապահովագրության (réassurance identitaire)» ռազմավարություն էր<sup>24</sup>, որը են-

21 Տե՛ս **Histoire et sciences sociales**. Un tournant critique?, էջ 293:

22 **Lepetit B.**, Les Annales aujourd'hui, "Review" (Fernand Braudel Center), 1995, N 2, p. 329.

23 Տե՛ս **Бессмертный Ю.**, «Анналы»: переломный этап? Одиссей. Человек в истории. Культурно-антропологическая история сегодня, М., 1991, էջ 9:

24 Տե՛ս **Delacroix Ch.**, նշվ. աշխ., էջ 86-111:

թաղրում էր նաև սոցիալական այլ գիտությունների հետ երկխոսության ակտիվացում, այն է՝ միջգիտակարգային սահմանափակ պրակտիկայի ընդլայնում:

Խմբագրականի ներածական մասում աննալականները, կարևորելով **նորարարությունը** ոչ թե իբրև ժառանգականության խնդիր, այլ իբրև «ուժերի դաշտում մշտական վերասահմանման գործընթաց», հստակ նշում էին, որ իրենց նպատակը քարացման և տարրալուծման միջև ընտրություն անելը չէ, ոչ էլ ջանքերի ցրումը կամ դպրոց հիմնելու (լի է մատուռի կամ հաստատության վերածվելու վտանգով) կամ փոստարկղ դառնալու հավակնությունը, այլ միայն փորձերի համար բաց տարածք լինելը, որտեղ հետազոտական նոր հարցադրումներն ու նոր մեթոդները կբախվեին և կբյուրեղանային՝ հիմք դնելով սոցիալական գիտությունների հետ պատմության երկխոսության նորացմանը<sup>25</sup>: Որից՝ առաջնային այն առանցքների ուրվագծման անհրաժեշտությունը, որոնցով միասնաբար կընթանար հանդեսը, և որոնք կլինեին խմբագրական քաղաքականության տարրերը: Այդպիսի առանցքային խնդիրներից էր, ըստ խմբագրականի, պատմության ինքնատիպությունը, որով այն կտարբերվեր տնտեսագիտությունից, մարդաբանությունից և սոցիոլոգիայից, քանի որ «նորարարության տարածումը (diffusion) ենթադրում է ներուժի տարբերություններ»<sup>26</sup>:

Այդպիսի նոր մոտեցման պատճառները հարկ է փնտրել ձևերի, կառույցների ու գործառույթների անհամար տեղաշարժերում, և այդ բազմակի ձեռնարկումներում առանձնահատուկ է ժամանակային մեխանիզմների հետազոտությունը: Նկատենք, որ, հակառակ տարեգրությունների և դրապաշտական պատմության գծային ժամանակի, աննալականներն առաջինն էին, որ ընդգծեցին սոցիալական ժամանակի բարդությունը և հավանություն տվեցին երկար տևողությանը (longue durée): Բայց հընթացս ժամանակի երկար տևողության, գրեթե անշարժ երևույթների վրա աննալականների կենտրոնացման հետևանքով պատմությունը զրկվել էր այն բանից, ինչը հատուկ էր իրեն՝ ժամանակային մեխանիզմներից փոփոխությունների շուրջ մտորելուց: Ուստի պատահական չէր, որ խմբագրականի

25 Տե՛ս *Tentons l'expérience*, «Annales: ESC», 1989, N 6, էջ 1317-1318:

26 Նույն տեղում, էջ 1318:



հեղինակներն այդ մոտեցումից բավականին հեռու էին մնացել, քանի որ, ըստ նրանց, «Սխալ է կարծել, թե ժամանակը պատմության միակ իրական առարկան է»<sup>27</sup>: Հարկավ, սա չէր նշանակում գծային, դրապաշտական, պատճառահետևանքային պատմությանը աննալական ոճով վերադարձ<sup>28</sup>: Բանն այն էր, որ պատմության հարթությունների «շերտավորման փոխաբերությունը և ավելի երկար տևողության երևույթների նկատմամբ առանձնահատուկ մտահոգությունը կրում են մոռանալու այն գործընթացները, որոնցով առաջանում է նորը»<sup>29</sup>: Չնայած այս ամենին՝ ուշագրավ է, որ հանդեսի խմբագիրները չէին հրաժարվում «համընդգրկուն պատմություն» հղացքից, ավելի շուտ՝ վերակերպափոխում էին այն՝ ակտիվացնելով դրա ոչ թե ընդգրկունությունը, այլ վերլուծություն-համադրություն հնարավորությունները: Ինչպիսին էլ լինի վերջինիս ծավալը, ըստ նրանց, պատմական հետազոտության խնդիրը միշտ էլ ընկերային փոխազդեցությունների (որպես ամբողջի) հետազոտությունն է: Եվ պատմական հետազոտության խնդիրը տեղաշարժելով միկրոպատմության տարածք՝ այդուամենայնիվ անհրաժեշտ է այն դիտարկել «ժամանակի երկար տևողության» համապատկերում<sup>30</sup>:

Այս համատեքստում արդեն հեղինակները քննադատության են ենթարկում պատմության **քանակական մոտեցումը**, որը, վերասահմանելով հետազոտական ստորոգությունները, չափազանց մեծ նշանակություն էր տալիս որոշ երևույթների զուտ դրանց հաշվելի լինելու պատճառով՝ մոռանալով, որ «հասարակությունը իր չէ»<sup>31</sup>: Ավելին՝ «սոցիալական առարկաները հատկություններով օժտված իրեր չեն, այլ փոխկապակցված փոխհարաբերությունների ամբողջություն՝ փոխդասավորությունների (configurations) մեջ մշտապես հարմարվող», ուստիև «սոցիալական ինքնությունները պետք է ընկալվեն իբրև դինամիկ իրողություններ»<sup>32</sup>, քանի որ մարդկության պատմությունը ոչ միայն տեխնիկայի և տնտեսության, այլև հուզական վարքագծի և մարդկանց միջև հուզական կապերի պատմություն է: Որից՝ սոցիալ-տնտեսական պատմության կողքին մշակույթի

---

27 Նույն տեղում:

28 St'u Wiślicz T., նշվ. աշխ., էջ 216:

29 Tentons l'expérience, p. 1318.

30 St'u Arnppe Poxac K. A., նշվ. աշխ., էջ 180:

31 Tentons l'expérience, p. 1319.

32 Նույն տեղում:

երկրորդային լինելու բացառումը և պատմության կամ պատմական գործընթացի ոչ միանշանակ լինելը, որտեղ հույժ կարևորվում է պատմագետի անհատականությունը, որն իմաստավորում է այն:

**Ըստ այդմ՝ պատմությունը՝ իբրև գիտություն, զարգանում է ոչ թե տվյալների կուտակմամբ կամ ամբողջարկմամբ (totalisation), այլ, օգտվելով լուսանկարչական փոխաբերությունից, ինչպես հեղինակներն են նշում, «ոսպնյակի տեղաշարժմամբ և կիզակետային երկայնության փոփոխմամբ (variation de la focale) (ընդգծումը մերն է – Ս. Հ.)»<sup>33</sup>:** Այստեղից էլ՝ միկրո- և մակրովերլուծությունների հակադրության բացառումը և դրանց փոխլրացականության ընդունումը, քանի որ վերլուծության տարբեր մասշտաբները տարբեր դիտանկյուններ են բացահայտում<sup>34</sup>: Խմբագիրները կողմ էին պատմական բարդ մոդելավորմանը, քանի որ իրական աշխարհի բազմաչափությունն անհնար է ներկայացնել՝ իջեցնելով այն մի քանի վարկածային պարզ սկզբունքների մակարդակի:

Հաջորդ քայլն այս ուղղությամբ այն էր, որ անհրաժեշտ դարձավ վերասահմանել նաև **միջգիտակարգայնությունը**, որի հարցում հեղինակները, թեպետ ընդգծում էին, որ մտադիր չեն խախտել 60-ամյա ավանդույթը, բայց և հարկ էին համարում նշել այն վտանգները, որոնք բխում են պատմության՝ սոցիալական այլ գիտությունների մեթոդների որդեգրումից: Վտանգներից **առաջինը** «անհատական, մեկուսացված փորձառությունների անվերջ բազմապատկումն է», որտեղ յուրաքանչյուր հետազոտող «ինքնիշխանորեն սահմանում է իր անձնական ակքիմիայի կանոնները», իսկ երկրորդն այն է, որ «միջգիտակարգային խնդիրների այս էմպիրիկ լուծումը» կարող է սովորական համարվել, և «երկարաժամկետ հեռանկարում հղացքների և մեթոդների այս շրջանառությունը բավարար կլինի փաստացի զուգամիտությունը (convergence) երաշխավորելու համար»<sup>35</sup>: Միևնույն ժամանակ, ինչպես ամփոփում են մանիֆեստի հեղինակներն իրենց դիտարկումները, միջգիտակարգայնությունը, քանի որ բազմապատկում է հայացքները, քննադատական հեղուկություն է ապահովում իրականությունը վերկայացնելու յուրա-

33 Նույն տեղում, էջ 1321:

34 Տե՛ս Wislicz T.,

34 Տե՛ս Wislicz T., նշվ. աշխ., էջ 217:

35 Tentons l'expérience, p. 1322.

քանչյուր ձևից, հնարավոր է՝ «թույլ է տալիս գերի չմնալ որևէ մեկին», ինչն էլ «այլ կերպ մտածելու» հնարավորությունը կարող է լինել<sup>36</sup>:

#### 4. «Իմացաբանական անիշխանություն», թե՞ «անցումային իմացաբանություն»

Ուշագրավ է, որ հանդեսի նույն համարում ներկայացվում են նաև «իմացաբանական անիշխանության» հաղթահարմանը միտված զանազան տեսական հոդվածներ<sup>37</sup>, որոնցում քննարկվում էին այնպիսի խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում էին հանդեսի՝ «քննադատական շրջաբեկման» նոր հայեցակարգի ընդհանուր սկզբունքներին, բայց և վկայում էին հետազոտական ուղիների հեռահար անհատականացման մասին: Այդ հետազոտությունների մեջ աչքի ընկնող երեք հոդվածներից (Ժան-Իվ Գրենիեի և Բեռնար Լըպտիի, Ալեն Բուոյի, Ռոժե Շարտիեի հեղինակությամբ) հատկապես ուշագրավ էր Գրենիեի և Լըպտիի համահեղինակած հոդվածը՝ աննալական սերունդների խզման և շարունակականության դիտանկյունից: Այսպես՝ Գրենիեն և Լըպտին համատեղ հոդվածում, ձգտելով վերականգնելու պատմության գիտակարգի իմացաբանական ներդաշնությունը, որը 1980-ականների Ֆրանսիայում անընդհատ «մասնատվում» էր, խզում էին կապերը Էռնեստ Լաբրուսի շարային և քանակական պատմության օբյեկտիվիզմի հետ (քանի որ լաբրուսյան հայեցակարգը անցյալի հասարակությունները հակված էր քննելու նախապես կառուցված ստորոգությունների օգնությամբ): Ըստ Գրենիեի և Լըպտիի՝ նման մոտեցումը «մակերեսային պոզիտիվիզմի (positivisme plat)» դրսևորում է, քանի որ վերկայացումները (représentations) միայն կրկնօրինակում են իրականությունը, նաև «հռետորական պատմության (histoire rhétorique)» դրսևո-

36 Տե՛ս նույն տեղում:

37 Տե՛ս Levi G., Les usages de la biographie, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1325-1336, Grenier J.-Y., Lepetit B., L'expérience historique. À propos de C.-E. Labrousse, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1337-1360, Boyer R., Économie et histoire : vers de nouvelles alliances, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1397-1426, Roncaloyo M., Histoire et géographie : les fondements d'une complémentarité, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1427-1434, Noiriol G., Pour une approche subjectiviste du social, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1435-1459, Fridenson P., Les organisations: un nouvel objet, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1461-1477, Hoock J., Dimensions analytiques et herméneutiques d'une histoire historique du droit, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1479-1490, Boureau A., Propositions pour une histoire restreinte des mentalités, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1491-1504, Chartier R., Le monde comme représentation, “Annales: ESC”, 1989, N 6, էջ 1505-1520:

րում է<sup>38</sup>, որի համար վավերականության չափանիշները վերաբերում են միայն «լեզվական պայմանականություններին (agencements linguistiques)»<sup>39</sup>:

Պատմա-տնտեսական խնդիրներից դեպի պատմա-մշակութային խնդիրները ծանրության կենտրոնի փոփոխությունը, հարկավ, ինքնանպատակ չէր, քանի որ հեղինակներին այն հետաքրքրում էր պատմական ճանաչողության հարացույցում տեղի ունեցող տեղաշարժերի դիտանկյունից<sup>40</sup>: Իրենց վերոհիշյալ դիտարկումները Լըպտին փորձում է հիմնավորել «Փորձի ձևերը: Ուրիշ սոցիալական պատմություն»<sup>41</sup> մենագրության մեջ, որը, ըստ էության, պրագմատիկ սոցիալական պատմության «քննադատական շրջադարձի» նախագծի իրականացման փորձ էր, և որը կենտրոնանում էր գործորդների հմտությունների (compétences des acteurs) վրա՝ ուշադրություն դարձնելով գործողությունների համաձայնության պայմաններին: Այդու՝ «քողազերծման» և «խորքային կարգի սահմանափակումների հաղթահարման» քննադատական հարացույցը տեղը զիջում էր «գիտակցության վերադարձին» ու «գործողությունների հստակ և մտածված մասին», ինչի հետևանքով՝ «գործորդի դերի վերագնահատմանը»<sup>42</sup>:

Ընդհանուր առմամբ 1988–1990 թվականների փնտրտուքային-հետազոտական տեքստերը ներառում էին **երկու** հիմնական ուղղություն՝ **համակցային (conjoncture) վերլուծություն** և **պատմաբանի մասնագիտության համար «նորացված հիմքեր ստեղծելու» առաջարկներ**: Այս առումով ուշագրավ է մանավանդ համակցային վերլուծությունը, ինչը նախ և առաջ նշանակում էր հրաժարում (եթե ոչ ժխտում) ստեղծված իրավիճակի մասին իբրև «պատմագիտական ճգնաժամ» կամ «գերիշխող անկարողություն» (1970-ականների աննալականները) մտածելուց: Ուստի վերաիմաստավորման հիմնական բնութագրիչը դառնում է «անցումային իմացաբանությունը (épistémologie de transition)»: Ընդհանրացնելով վերոշա-

38 Տե՛ս Grenier J.-Y., Lepetit B., նշվ. աշխ., էջ 1357:

39 Delacroix Ch., Bernard Lepetit Carnets de croquis. Sur la connaissance historique, “Annales: ESC”, 2002, N 1, p. 204.

40 Տե՛ս Бессмертный Ю., «Анналы»: переломный этап? Одиссей. Человек в истории. Культурно-антропологическая история сегодня, էջ 11:

41 Տե՛ս Lepetit B., Les Formes de l'expérience. Une autre histoire sociale, Paris, “Albin Michel”, 1995:

42 Տե՛ս Delacroix Ch., նշվ. աշխ., էջ 90:

րադրյալը՝ կարելի է ասել, որ աննալական այս նոր սերունդը, խորքային առումով, իր անմիջական նախորդ՝ երրորդ սերնդի նկատմամբ, Ռոխասի դիպուկ բնորոշմամբ, որդեգրել էր «սկզբունքային մտավոր խզման դիրքորոշում»<sup>43</sup>: Այս ընդհատումն ընդհանուր գծերով ուներ հետևյալ պատկերը. **(ա)** մտայնությունների պատմությունը փոխարինվեց սոցիալական նոր մշակութային պատմությամբ կամ տարբեր մշակութային պրակտիկաների սոցիալական պատմությամբ, **(բ)** փորձ արվեց նոր հայացք առաջադրելու մարդաբանական պատմության հին խնդիրներին՝ համատեղելով պատմագետի գործիքակազմը մարդաբանության հասկացությունների, տեխնիկայի և ընթացակարգերի հետ, **(գ)** մերժվեցին նախորդ տնտեսական պատմության որոշ ենթադրություններ (քանակային կամ շարային), և մտահոգությունների առանցքում հայտնվեց տարասեռ իրողությունների փորձարկման հնարավորությունների ուսումնասիրությունը (որոնք անհնար է բացատրել քանակային կամ շարային եղանակներով), **(դ)** հարցականի տակ դրվեց սոցիալական պատմության օբյեկտիվությունը՝ փոխարինվելով գործորդների (acteur) խնդրով, **(ե)** վերածնակերպվեցին **համընդգրկուն պատմության և երկար տևողության հղացքները**՝ կարևորելով հասարակության (նաև սոցիալականի) ամբողջականությունն ու մակրո- և միկրոմակարդակների փոխլրացականությունը, **(զ)** վերասահմանվեց միջգիտակարգայնությունը՝ զատվելով «վայրի փոխառություններից» և առանձին գիտակարգերի գերիշխանական հավակնություններից<sup>44</sup>:

Աննալական վերոհիշյալ նոր նախագծի կարծես տրամաբանական արտահայտիչը եղավ 1994 թվականին հանդեսի նոր՝ «Պատմություն, սոցիալական գիտություններ» ենթախորագիրը, ինչպես նաև խմբագրակազմ հինգ նոր անդամների (Ժան-Իվ Գրենիե, Ժոսլին Դակլիա, Միշել Վեմեր, Լորան Տենո, Անդրե Օռլեան) ընդգրկումը: Հատկանշական էր հատկապես այն, որ հանդեսի ենթախորագրի մեջ «վերջապես» հայտնվել էր «պատմություն»-ը, որը նախորդ դեպքերում ընդամենը ենթադրվում էր: Խմբագիրների

43 Агирре Рохас К. А., указ. соч., с. 174.

44 Այս մասին տե՛ս նաև Ревель Ж., История и социальные науки во Франции: на примере эволюции школы «Анналов», «Новая и новейшая история», 1998, N 6, էջ 85-87, Агирре Рохас К. А., նշվ. աշխ., էջ 174-183, Трубникова Н. В., Французская историческая школа Анналов, М., «Квадрига», 2016, էջ 227-229:

մեկնաբանմամբ՝ փոփոխությունն անհրաժեշտ էր գիտական պատմության և դրա հետազոտական հիմնական մեթոդների ինքնությունը պահպանելու համար. «Եռակողմ՝ «Տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ» բաժանումն այլևս համարժեք (adéquate) չէր. այն լիարժեքորեն չէր համապատասխանում վերլուծության մակարդակների դասավորության ձկունությանը և բազմակարծությանը, որն այսօր մենք ցանկանում ենք, և ինչը նոր՝ «Պատմություն, սոցիալական գիտություններ» ենթախորագիրը լավագույնս է առաջարկում»<sup>45</sup>: Իսկ Յուրի Բեսսներտնիի հարցումին Լրպտին հավելեց, որ կարծում է, թե այդ փոփոխությունը «համապատասխանում է ամսագրի հիմնարար սկզբունքներին, որոնց գիտական մոտեցումների ողջ շարունակականությունը հիմնված է նորարարությունների մտածված և համառ որոնման վրա»<sup>46</sup>: Այսու՝ խմբագիրներն ընդգծում էին պատմության տարածամասնակյա իմաստն ու հանդեսի՝ պատմականությունն իր ներքին տարբերակման մեջ հետազոտելու հավակնությունը:

Ընդհանուր առմամբ փոփոխությունները, հարկավ, ազդարարում էին «նոր» հայեցակարգի կառուցման նախագծի մասին, որը թերևս կվերածվեր աննալականների Չորրորդ սերնդի հարացուցային կայունացման տարածքի և կկարողանար վերադարձնել աննալականների նախկին առաջատար դիրքը համաշխարհային պատմագիտության ծիրում: Բայց, ինչպես ցույց տվեց ժամանակը, «քննադատական շրջադարձը», որը ենթադրում էր թե՛ մասնագիտական ինքնությունը պաշտպանելու և թե՛ նոր գիտակարգային հարացույց կառուցելու «փաստարկների և հիմնավորումների ճանապարհորդություն», մնաց անավարտ, թեպետ տեսական քննարկումները շարունակվեցին ամսագրի նաև հաջորդ համարներում<sup>47</sup>:

45 *Histoire, sciences sociales*, “Annales. Histoire, Sciences Sociales”, 1994, N 1, p. 3.

46 Лепти Б., Гренье Ж.-И., указ. соч., с. 317.

47 Ղիցուք տե՛ս Burguière A., De la compréhension en histoire, “Annales: ESC”, 1990, N 1, էջ 123-136, Milo D. S., Pour une histoire expérimentale, ou la gaie histoire, “Annales: ESC”, 1990, N 3, էջ 717-734, Guilhaumou J., L’argument philosophique en histoire. Le laboratoire Révolution française, “Annales: ESC”, 1992, N 1, էջ 150-161 և այլն:

## Ամփոփում

Ընդհանրացնելով աննալական նոր սերնդի ուրվագծման գործընթացը՝ անհնար է այսօր հստակ ասել, թե որն է 1994 թվականից հետո եկած աննալականների հայեցակարգը, մանավանդ որ հընթացս նոր աննալականները բազմիցս են փոփոխել իրենց դիրքորոշումները և ինչ-որ հստակ կամ ամբողջական դիրքորոշում դեռ չեն որդեգրել: Անտուան դը Բեկը, ավելի ուշ անդրադառնալով «քննադատական շրջաբեկման» վերականգնողական ազդակին, նշում է, որ այդ նախագիծը, ըստ էության, չընդունվեց, իսկ այդ հայեցակարգին հետամուտ պատմագետները սակավաթիվ էին և մեկուսացած<sup>48</sup>: Այդ նախագծի անավարտության ոչ պակաս կարևոր պատճառներից էր և 1996 թվականին Բեռնար Լըպտիի անժամանակ մահը, ինչի հետևանքով աննալականները ոչ միայն չշարունակեցին «քննադատական շրջադարձի» նախագիծը, այլև արդեն 1998 թվականին հստակեցրին, որ Բեռնար Լըպտիի պաշտպանած պրագմատիկ կողմնորոշումները չեն հանդիսանում ամսագրի նոր ինտելեկտուալ գիծը, մինչդեռ 2013 թվականին կրկին (և բացահայտորեն) հղում են անում 1990-ականների «քննադատական շրջադարձի» պրագմատիկական հայեցակարգին<sup>49</sup>:

Վերոշարադրյալից ելնելով՝ կարող ենք ասել, որ 1980-ական թվականներին ի հայտ եկան աննալականների Չորրորդ սերնդի **միայն նախանշանները**, և թերևս ձիշտ են հետազոտողներից ոմանք, որ կարծում են, թե այդպիսի սերունդ այդպես էլ չձևավորվեց<sup>50</sup>, քանի որ նոր պատմագետները չձևակերպեցին իրենց միասնական պատասխանը պատմության առջև ծառայած մարտահրավերներին՝ «փոփոխելով պատմությանն ուղղված իրենց հարցերի բնույթն ու իմաստը»<sup>51</sup>: Դեռևս չեն հաղթահարվել այն հսկայական դժվարությունները, որոնք խոչընդոտում են նոր այլընտրանքային ինտելեկտուալ ծրագրի շուրջ

48 Տե՛ս **Baecque A. de**, OÙ est passé le “tournant critique”? “Le Débat”, 1999, N 2, էջ 162-170: Սկստենք նաև, որ դեռ 1994 թվականին խմբագրական խորհրդի նորացված կազմում ընդգրկված որոշ նոր անդամներ այդպես էլ ամբողջությամբ չներգրավվեցին ամենօրյա աշխատանքներում, ինչը նրանց հնարավորություն կտար մասնակցելու վերոհիշյալ այլընտրանքային նախագծի մշակմանը (տե՛ս **Agippe Poxac K. A.**, նշվ. աշխ., էջ 185):

49 Տե՛ս **Anheim É. et al.**, Repenser les statuts sociaux, “Annales: ESC”, 2013, N 4, էջ 949-953:

50 Տե՛ս **Barros C.**, La escuela de Annales y la historia que viene, URL://[http://www.h-debate.com/cbarros-spanish/articulos/historiografia\\_inmediata/escueladeannaes.htm](http://www.h-debate.com/cbarros-spanish/articulos/historiografia_inmediata/escueladeannaes.htm) (մուտք՝ 07.05.2007), **Dosse F.**, L’histoire en miettes. Des Annales à la “nouvelle histoire”, Paris, “La Découverte”, 2005, էջ 255:

51 **Ստեփանյան Ա.**, Պատմությունն իբրև տեքստ (Մեկնություն և գրության հնարավորություն), «Պատմություն և կրթություն», Եր., 2005, N 1-2, էջ 19:

համախմբումը<sup>52</sup>: Նոր աննալականները այլընտրանքային հարացույցի բացակայության պայմաններում բավարարվել են վիճարկվող մոդելի «ad hoc վերադասավորումներով», իսկ դպրոցի ինքնության պաշտպանության գործում ներգրավված հետազոտողների թե՛ գիտական մոտեցումը և թե՛ վերաբերմունքը անհամաչափ են: Ստացվում է, որ այլանալու բոլոր նախադրյալներն ունեցող աննալականները մնացին նախնական իմացաբանական վերակազմավորման մեջ՝ կարոտ նոր հարացույցի: Եվ պատահական չէ, որ վերջին շրջանում աննալականների նոր սերունդը հանդեսին տվել է թեմատիկ բնույթ, դիցուք՝ «Երկար տևողությունը բանավեճերում: Գիտությունների պատմություն»<sup>53</sup>, «Քանակային պատմություն»<sup>54</sup> կամ «Հանդեսի ինքնանկար»<sup>55</sup> և այլն: Ըստ այսմ՝ թերևս այսօր էլ ուժի մեջ է մնում դեռ 1990-ականներին Աննալների դպրոցի կարգավիճակին տրված «անորոշ» և «կասկածելի» բնորոշումը: Չնայած այդ ամենին՝ «քննադատական շրջաբեկումն» ու դրա պատմությունը ցայժմ չեն կորցրել իրենց արդիականությունը, մանավանդ հղացական կամ հայեցակարգային նորարարականությունների, ինչպես նաև խզումի ու շարունակականության դիտանկյունից:

Միով բանիվ՝ Աննալներն այլևս տեղական՝ ֆրանսիական բնույթ չունեն, ուստի կարիք չկա դպրոցի Չորրորդ սերունդը փնտրելու Ֆրանսիայում. այն այլևս «առանց հայրերի հանրույթ»<sup>56</sup> է և վերտեղային բնույթ ունի:

**Սմբատ Խ. Հովհաննիսյան** – ԵՊՀ պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է պատմագրության, քաղաքակրթության, նշանագիտության և պատմության տեսությունների, նախաարդյունաբերական և արդյունաբերական դարաշրջանների հայ և համաշխարհային առևտրական կապիտալի պատմության հիմնախնդիրները:

Էլ. հասցե՝ shovhannisyan@aua.am,  
smbat\_hovhannisyan@ysu.am

52 *Stu Aruppe Poxac K. A.*, նշվ. աշխ., էջ 185:  
53 *La longue durée en débat - Histoire des sciences*, “Annales: ESC”, 2015, N 2.  
54 *Histoire quantitative*, “Annales: ESC”, 2018, N 4.  
55 *Autoportrait d’une revue*, “Annales: ESC”, 2020, N 3/4.  
56 *Baccue A. de*, op. cit., p. 167.



## THE ANNALES SCHOOL ON THE THRESHOLD OF THE XXI CENTURY:

“Critical Turn” or Frontal Reconstruction?

Smbat Kh. Hovhannisyan

*Candidate of Sciences in History*

**Keywords** – The “Annales” school, the fourth generation of Annales, postmodern criticism, transdisciplinarity, decompartmentalization, identity reinsurance, critical turn, conjunctural analysis, transitional epistemology.

The paper discusses the problems of the turning point of the late 1980s of the Annales school, which manifested itself in efforts to develop new historiography tasks and research methods. This was a period that historians often call the “period of uncertainty”, the “crisis of intelligibility of historians” “epistemological anarchy”, etc. The crisis was the result of postmodern criticism of orientations and research paradigms, while at the same time an internal school reshuffle disrupted the old equilibrium. Historians, unable to find the necessary support in the social sciences, return to narrative and the traditional event. Therefore, judgments about the crisis acquire a completely different content and meaning, and the concept of “crisis” used is replaced by a “turn”, as it is more about forming a field of new possibilities of historiography. This is evidenced by the fact that at the end of 1989 various theoretical articles aimed at overcoming the crisis were found in the journal.

Despite all this, in the late 1980’s there were only signs of a fourth generation of annals, and perhaps some researchers are right to believe that such a generation never took shape, because new historians have not articulated their unified response to the challenges facing history by changing the nature and meaning of their questions. So far, those huge difficulties that impede consolidation around a new alternative intellectual program have not been overcome.

**ШКОЛА «АННАЛОВ» НА ПОРОГЕ XXI ВЕКА:  
«Критический поворот» или фронтальная реконструкция?**

Смбат Х. Оганнисян  
*Кандидат ист. наук*

**Ключевые слова** - школа «Анналов», четвертое поколение Анналов, постмодернистская критика, трансдисциплинарность, дисциплинарное разделение, перестрахование самости, критический поворот, конъюнктурный анализ, переходная эпистемология.

В статье рассматриваются проблемы школы «Анналов» в переломный период конца 1980-х гг. и попытки разработки новых задач историографии и методов исследований. Это был период, который историки часто называют «периодом неопределенности», «кризисом вразумительности историков», «эпистемологической анархией» и др. Кризис был результатом постмодернистской критики ориентаций и исследовательских парадигм и в то же время внутреннего переустройства школы, в результате которого было нарушено прежнее равновесие. Историки, не найдя необходимой опоры в социальных науках, возвращаются к повествовательному и традиционному описанию событий. Поэтому суждения о кризисе приобретают совершенно иное содержание и смысл, а используемое понятие «кризис» заменяется понятием «поворот», т.к. речь идет в большей степени о формировании поля новых возможностей историографии. Свидетельством сказанному служит то, что уже в конце 1989 г. в номере журнала появляются различные теоретические статьи, касающиеся способов преодоления этого кризиса.

Несмотря на все это, в конце 1980-х гг. появились лишь признаки возникновения четвертого поколения Анналов, и, возможно, правы некоторые исследователи, которые считают, что это поколение так и не сформировалось, поскольку новые историки не дали единого ответа на стоящие перед историей вызовы, изменив лишь характер и смысл своих вопросов. До сих пор не преодолены те огромные трудности, которые препятствуют консолидации вокруг новой альтернативной интеллектуальной программы.

## REFERENCES

1. **Agirre Roxas K. A.**, Kriticheskiy podxod k istorii francuzskix “Annalov”, M., Izdatel'stvo “Krug”, 2006 **(In Russian)**.
2. **Bessmertnyj Ju.**, “Annaly”: perelomnyj etap? Odissej. Chelovek v istorii. Kul'turno-antropologicheskaja istorija segodnja, M., 1991 **(In Russian)**.
3. **Bessmertnyj Ju.**, Shkola “Annalov”: vesna 1989 g., “Jevropejskij almanax”, M., 1991 **(In Russian)**.
4. **Lepti B., Gren'je Zh.-I.**, O nekotoryx izmenenijax v zhurnale “Annaly” v 1994 g. (Otvety na voprosy Ju. L. Bessmertnogo), Odissej. Chelovek v istorii 1994: Kartina mira v narodnom i uchenom soznanii, M., 1994 **(In Russian)**.
5. **Revel' Zh.**, Istorija i social'nyje nauki v Francii: na primere Evoljucii shkoly “Annalov”, “Novaja i novejšhaja istorija”, 1998, N 6 **(In Russian)**.
6. **Step'anyan A.**, Patmut'yunn ibrev tek'st (Meknut'yun yev grut'yan hnaravorut'yun), “Patmut'yun yev krt'ut'yun”, Yer., 2005, N 1-2, ėj 9-22 **(In Armenian)**.
7. **Trubnikova N. V.**, Francuzskaja istoricheskaja shkola “Annalov”, M., “Kvadriga”, 2016 **(In Russian)**.